ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ-12»

ք.Երևան « » « » 2020թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամը ի դեմս ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կուրացիո» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Չերքեզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 986.000,00 /ինը հարյուր ութսունվեց հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը ապրանքների մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո

ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 26 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական	«Կուրացիո» ՍՊԸ
բժշկական համալսարան Հիմնադրամ	Հասցե՝ ք.Երևան, Սարյան 16/30
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2	Հեռախոսահամար՝ 010 58 19 49
Հեռախոսահամար՝ 060 621 000	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ	Հ/հ՝ 20512 2202158 1001
Հ/հ՝ 11500166513800	ՀՎՀՀ՝ 02585487
ՀՎՀՀ՝ 01503448	էլ. հասցեն՝curacao.llc@gmail.com
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան	Տնօրեն՝ Ա.Չերքեզյան
Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078 Date: 2020.03.12 14:22:13 AMT	Digitally signed by CHERKEZYAN ARTUR 2110780215 Date: 2020.03.10 14:14:49

/ստորագրություն/	/ստորագրություն/
	Կ.Տ

Ч.S

Հավելված N 1
« » « » 2020թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ-12» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը **
10	33141182	Թորակալ դրենաժ 24Fr, առանց ստիլետի	Redax®, Redax S.p.A	Թորակալ դրենաժ 24Fr չափի, առանց ստիլետի: Պատրաստված է թափանցիկ, թերմոսենսիտիվ, հեմո-և բիոհամատեղելի PVC-ից: Ծայրը բութ է, որի շնորհիվ նվազում է թոքերի վնասման հավանականությունը: Ամբողջ երկարությամբ ունի ռենտգեն պոզիտիվ երիզ և սանտիմետրային գծանշում: Ունի կողմնային ատրավմատիկ անցքեր և ինտեգրացված կոննեկտոր: Ստերիլ, հատային փաթեթավորմամբ, միանգամյա օգտագործման: Չափսը՝ 24Fr, երկարությունը՝ 45սմ, տրամագիծը՝ 8.0մմ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների	հատ	2 700,00	13 500,00	5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	5	

				առկայություն:							
11	33141182	Թորակալ դրենաժ 28Fr, առանց ստիլետի	Redax®, Redax S.p.A	Թորակալ դրենաժ 28Fr չափի, առանց ստիլետի: Պատրաստված է թափանցիկ, թերմոսենսիտիվ, հեմո-և բիոհամատեղելի PVC-ից: Ծայրը բութ է, որի շնորհիվ նվազում է թոքերի վնասման հավանականությունը: Ամբողջ երկարությամբ ունի ռենտգեն պոզիտիվ երիզ և սանտիմետրային գծանշում: Ունի կողմնային ատրավմատիկ անցքեր և ինտեգրացված կոննեկտոր: Ստերիլ, հատային փաթեթավորմամբ, միանգամյա օգտագործման: Չափսը՝ 28Fr, երկարությունը՝ 45սմ, տրամագիծը՝ 9.3մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	2 700,00	13 500,00	5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	5	
17	33141136	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 14Fr	Portex™, Smiths Medical	Ինտուբացիոն փողի արտածծման կաթետեր /ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 14Fr/, պատրաստված է լատեքս չպարունակող հարթ, սահուն նյութից, որի շնորհիվ հեշտությամբ անցնում է ներշնչափողային կամ տրախեոստոմիկ փողերի միջոցով: Ունի երկու կողմնային անցքեր և վակուում մատնային հսկիչ, որոնց շնորհիվ նվազում է հյուսվածքների	հատ	550,00	55 000,00	100	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	100	

				վակուումային վնասման հավանականությունը: Չափսը՝ 14Fr, երկարությունը՝ 515մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:							
18	33141136	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 16Fr	Portex™, Smiths Medical	Ինտուբացիոն փողի արտածծման կաթետեր /ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 16Fr/, պատրաստված է լատեքս չպարունակող հարթ, սահուն նյութից, որի շնորհիվ հեշտությամբ անցնում է ներշնչափողային կամ տրախեոստոմիկ փողերի միջոցով: Ունի երկու կողմնային անցքեր և վակուում մատնային հսկիչ, որոնց շնորհիվ նվազում է հյուսվածքների վակուումային վնասման հավանականությունը: Չափսը՝ 16Fr, երկարությունը՝ 515մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	550,00	55 000,00	100	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	100	
19	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, 5.0: Նախատեսված է	հատ	3 700,00	18 500,00	5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա	5	

		թեքումով մանժետով օռոտրախեալ, N 5.0		դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օռոտրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ: Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 5.0մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:					ն 114 հասցեով		
20	33141211	Ներշնչափողայի ն խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 5.5	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, 5.5: Նախատեսված է դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օռոտրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, մանժետը հատուկ գերնուրբ,	հատ	3 700,00	18 500,00	5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	5	

				տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ: Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 5.5մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:							
21	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 6.0	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, 6.0: Նախատեսված է դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օռոտրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ: Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 6.0մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր	հատ	3 700,00	18 500,00	5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	5

				է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:							
22	33141211	Զտիչ տրախեոստոմիկ փողի	Portex™, Smiths Medical	Ստերիլ, մեկանգամյա օգտագործման ջերմա-խոնավային զտիչ է տրախեոստոմիկ փողերի համար, թթվածնի միացման պորտով և սանացիայի միջոցով սեկրետի հեռացման պորտով: Կատարում է "արհեստական քթի" ֆունկցիա: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	1 000,00	30 000,00	30	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	30	
24	33141211	Արմիրացված ներշնչափողայի ն օռոտրախեալ խողովակ N 6.5	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային օռո-նազո-տրախեալ արմիրացված փող ցածր ճնշման մանժետով, N 6.5 չափի: Նախատեսված է դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օռո-նազո-տրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, արմիրացված չժանգոտող	հատ	7 200,00	36 000,00	5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	5	

				պողպատով: Մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված: Մերֆիի տիպի: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 6.5մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:							
26	33141211	Ներշնչափողայի ն խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 6.5	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, 6.5: Նախատեսված է դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օռոտրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ: Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 6.5մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ	հատ	3 700,00	18 500,00	5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	5

				պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:							
27	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 7.0	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, 7.0: Նախատեսված է դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օռոտրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ: Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 7.0մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	3 700,00	18 500,00	5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	5	
28	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, 7.5: Նախատեսված է	հատ	3 700,00	18 500,00	5	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա	5	

		թեքումով մանժետով օռոտրախեալ, N 7.5		դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օռոտրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ: Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 7.5մմ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:					ն 114 հասցեով		
29	33141211	Ներշնչափողայի ն խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքան ի աջ 35Fr	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 35Fr: Տրախեալ մանժետի տրամագիրը՝ 27մմ, բրոնխիալ մանժետի տրամագիծը՝ 21մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ՝ 1 հատ, ստիլետ՝ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր՝ 2 հատ,	հատ	39 000,00	78 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	2	

				կոննեկտոր 15մմ՝ 2 հատ, Y աձև կոննեկտոր՝ 1 հատ, պտտվող կոննեկտոր՝ 1 հատ, արտածծման ծայրադիրներ՝ 4 հատ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:							
30	33141211	Ներշնչափողայի ն խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքան ի ձախ 35Fr	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 35Fr: Տրախեալ մանժետի տրամագիրը՝ 27մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 18մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ՝ 1հատ, ստիլետ՝ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր՝ 2 հատ, կոննեկտոր 15մմ՝ 2 հատ, Y աձև կոննեկտոր՝ 1 հատ, պտտվող կոննեկտոր՝ 1 հատ, արտածծման ծայրադիրներ՝ 4 հատ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	39 000,00	78 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	2	
31	33141211	Ներշնչափողայի ն խողովակի	Portex™, Smiths	Ներշնչափողային խողովակի հավաքածու	հատ	39 000,00	78 000,00	2	ք. Երևան, Աբովյան	2	

		հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 37Fr	Medical	թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 37Fr: Տրախեալ մանժետի տրամագիրը՝ 28մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 21մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրբրոնխիալ խողովակ՝ 1 հատ, ստիլետ՝ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր՝ 2 հատ, կոննեկտոր 15մմ՝ 2 հատ, Y աձև կոննեկտոր՝ 1 հատ, պտտվող կոննեկտոր՝ 1 հատ, արտաձծման ծայրադիրներ՝ 4 հատ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:					60 և/կամ Մուրացան 114 հասցեով		
32	33141211	Ներշնչափողոյի ն խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 37Fr	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 37Fr: Տրախեալ մանժետի տրամագիրը՝ 28մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 18մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրբրոնխիալ խողովակ՝ 1 հատ, ստիլետ՝ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր՝ 2 հատ, կոննեկտոր 15մմ՝ 2 հատ, Y աձև կոննեկտոր՝ 1 հատ, պտտվող կոննեկտոր՝ 1 հատ, արտաձծման	հատ	39 000,00	78 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	2	

				ծայրադիրներ՝ 4 հատ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:							
33	33141211	Ներշնչափողայի ն խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքան ի աջ 39Fr	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 39Fr: Տրախեալ մանժետի տրամագիրը՝ 29մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 23մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ՝ 1 հատ, ստիլետ՝ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր՝ 2 հատ, կոննեկտոր 15մմ՝ 2 հատ, Y աձև կոննեկտոր՝ 1 հատ, պտտվող կոննեկտոր 1 հատ, արտածծման ծայրադիրներ՝ 4 հատ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:	հատ	39 000,00	78 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	2	
34	33141211	Ներշնչափողայի ն խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ	Portex™, Smiths Medical	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 39Fr:	հատ	39 000,00	78 000,00	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	2	

		ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքան ի ձախ 39Fr		Տրախեալ մանժետի տրամագիրը՝ 29մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 23մմ: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ՝ 1հատ, ստիլետ՝ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր՝ 2 հատ, կոննեկտոր 15մմ՝ 2 հատ, Y աձև կոննեկտոր՝ 1 հատ, պտտվող կոննեկտոր՝ 1 հատ, արտաձծման ծայրադիրներ՝ 4 հատ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:							
44	33141211	Փակ ակտիվ դրենաժային համակարգ	Redax®, Redax S.p.A	Փակ ակտիվ դրենաժային համակարգ 18CH/F ՌԵԴՈՆ դրենաժով, միացված 500մլ վակուումային/զսպանակայ ին տարային: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն:	հատ	3 600,00	180 000,00	50	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	50	
47	33141129	Դիմակ անեսթեզիայի/1	Portex™, Smiths Medical	Դիմակ անեսթեզիայի մանկական, դեղին օղակով: Նախատեսված է շնչեցման համար: Պատրաստված է պոլիվինիլքլորիդից: Էլիպսաձև է, թափանցիկ, գունային տարբերակված օղակով, միանգամյա օգտագործման: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½	հատ	2 000,00	8 000,00	4	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացա ն 114 հասցեով	4	

				առկայություն:							
48	33141129	Դիմակ անեսթեզիայի/2	Portex™, Smiths Medical	Դիմակ անեսթեզիայի մանկական մեծ, կանաչ օղակով: Նախատեսված է շնչեցման համար: Պատրաստված է պոլիվինիլքլորիդից: Էլիպսաձև է, թափանցիկ, գունային տարբերակված օղակով, միանգամյա օգտագործման: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն:	հատ	2 000,00	8 000,00	4	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	4	
49	33141129	Դիմակ անեսթեզիայի/3	Portex™, Smiths Medical	Դիմակ անեսթեզիայի չափահասի փոքր, կարմիր օղակով: Նախատեսված է շնչեցման համար: Պատրաստված է պոլիվինիլքլորիդից: Էլիպսաձև է, թափանցիկ, գունային տարբերակված օղակով, միանգամյա օգտագործման: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն ½ առկայություն:	հատ	2 000,00	8 000,00	4	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեով	4	
ԸՆԴԱՄԵՆԸ							**986.000,00**				

** Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:*

*** 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում:*

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հեռախոսահամար՝ 060 621 000
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.12 14:22:58 AMT

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Կուրացիո» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Սարյան 16/30
Հեռախոսահամար՝ 010 58 19 49
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 20512 2202158 1001
ՀՎՀՀ՝ 02585487
Էլ. հասցեն՝curacao.llc@gmail.com
Տնօրեն՝ Ա.Չերքեզյան

Digitally signed by CHERKEZYAN ARTUR 2110780215

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » « » 2020թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ-12» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
10	33141182	Թորակալ դրենաժ 24Fr, առանց ստիլետի	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
11	33141182	Թորակալ դրենաժ 28Fr, առանց ստիլետի	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
17	33141136	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 14Fr	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
18	33141136	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 16Fr	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
19	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 5.0	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
20	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

		օռոտրախեալ, N 5.5													
21	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 6.0	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
22	33141211	Զտիչ տրախեոստոմիկ փողի	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
24	33141211	Արմիրացված ներշնչափողային օռոտրախեալ խողովակ N 6.5	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
26	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 6.5	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
27	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 7.0	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
28	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 7.5	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
29	33141211	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 35Fr	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
30	33141211	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

		սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 35Fr													
31	33141211	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 37Fr	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
32	33141211	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 37Fr	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
33	33141211	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 39Fr	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
34	33141211	Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

		համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի ձախ 39Fr													
44	33141211	Փակ ակտիվ դրենաժային համակարգ	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
47	33141129	Դիմակ անեսթեզիայի/1	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
48	33141129	Դիմակ անեսթեզիայի/2	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
49	33141129	Դիմակ անեսթեզիայի/3	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով՝ ըստ մատակարարված ապրանքների քանակի:*

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հեռախոսահամար՝ 060 621 000
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.12 14:23:14 AMT

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Կուրացիո» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Սարյան 16/30
Հեռախոսահամար՝ 010 58 19 49
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/հ՝ 20512 2202158 1001
ՀՎՀՀ՝ 02585487
Էլ. հասցեն՝ curacao.llc@gmail.com
Տնօրեն՝ Ա.Չերքեզյան

Digitally signed by CHERKEZYAN ARTUR 2110780215
Date: 2020.03.10 14:15:52 GMT+04:00

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2020թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ-12» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.